Հավելված 3
Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության
13-02-2025 թվականի N 51-L որոշմամբ
Գործում է սկսած 12.06.2025 թվականից

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել:

Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք Բանկի կայքում, խնդրում ենք ուշադրություն դարձնել տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին:

Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք թղթային տարբերակով, մանրամասն տեղեկությունների համար խնդրում ենք այցելել Բանկի ինտերնետային կայք՝ www.idbank.am հասցեով (ուշադրություն դարձնելով տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին), դիմել Բանկի ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարել Բանկի Հեռախոսազանգերի կենտրոն՝ 010 59 33 33, 060 27 33 33 հեռախոսահամարներով:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ BUSINESS ROCKET PLUS ՎԱՐԿԻ

1.	Վարկի տեսակ		Վարկ	
2.	Վարկի նպատակ		Ձեռնարկատիրական գործունեության ընդլայնման և զարգացման համար	
3.	Հաճախորդ		ՀՀ ռեզիդենտ իրավաբանական անձ (ՍՊԸ)	
4.	Արժույթ		ՀՀ դրամ	
5.	Նվազագույն գումար		100, 000	
6.	Առավելագույն գումար		10,000,000	
7.	Տարեկան տոկոսադրույք	**Տոկոսադրույքի տիպը՝ Լողացող տոկոսադրույք**[1]	անվանական	ԱԲՀՏ + սկսած 6,7%
			փաստացի	17.24%
8.	Նվազագույն/առավելագույն ժամկետ		60 ամիս	
9.	Վարկային հայտի ուսումնասիրության վճար		Չի սահմանվում	
10.	Վարկի տրամադրման միջնորդավճար		Չի սահմանվում	
11.	Վարկի ամսական սպասարկման վճար		Չի սահմանվում	
12.	Վարկի մարման արտոնյալ ժամանակահատված		Չի սահմանվում	
13.	Վարկի և տոկոսագումարների մարումներ		Անուիտետային՝ վարկի մայր գումարի և տոկոսագումարի հանրագումարի ամսական հավասարաչափ մարումներ	
14.	Բիզնեսի գործունեության նվազագույն ժամկետ (անընդհատ)		6 ամիս	
15.	Բանկային հաշվի բացում և սպասարկում (վարկի տրամադրման դեպքում)		Բանկային հաշիվը բացվում է անվճար և սպասարկվում համաձայն Բանկում գործող սակագների, որոնք ներկայացված են հղումով	
16.	Վարկի գումարի տրամադրման և օգտագործման եղանակ		Վարկի գումարը տրամադրվում է անկանխիկ՝ բանկային հաշվին փոխանցելու միջոցով. Բանկային հաշվից վարկի գումարի կանխիկացումն իրականացվում է համաձայն Բանկում գործող սակագների, հետևյալ հղումով՝ Սակագների տեղեկատվական ամփոփագիր:	
17.	Ապահովվածություն		Իրավաբանական անձի մասնակցի երաշխավորություն, ընդ որում երաշխավոր ֆիզիկական անձի տարիքը վարկի տրամադրման օրվա դրությամբ չպետք է պակաս լինի 21 տարեկանից և Վարկի վերջնաժամկետին չպետք է գերազանցի 65 տարեկանը	
18.	Վարկառուի/երաշխավորի վարկային պատմությանը ներկայացվող պահանջներ		Բանկի կողմից ընդունելի վարկային պատմություն	

1 «ԱյԴի Բանկ» ՓԲԸ հաշվարկային տոկոսադրույքը (ԱԲՀՏ) և հաշվարկման մեթոդաբանությունը անցնելով հղումով: Սույն պայմաններով տրամադրվող վարկերի համար ԱԲՀՏ-ն կարող է փոփոխվել տարեկան 2 անգամ՝ մայիս և նոյեմբեր ամիսներին, ընդ որում փոփոխությունն ուժի մեջ է մտնում այն հրապարակելուց 30 օրացուցային օր հետո: Վարկի լողացող (անվանական) տոկոսադրույքի նվազագույն և առավելագույն շեմերը՝ 9% և 21,7%:

19.	Վարկ/գրավ (գրավի գնահատված իրացվելի արժեք) հարաբերակցություն	Գույքային գրավ չի պահանջվում
20.	Գրավի առարկայի ապահովագրություն	Գույքային գրավ չի պահանջվում
21.	Տույժեր, տուգանքներ	ժամկետանց վարկի տույժ՝ օրական 0.1%
22.	Գրավի առարկայի ապահովագրություն	ժամկետանց տոկոսագումարի տույժ՝ օրական 0.1%
23.	Տույժեր, տուգանքներ Հայտի ընդունման և վարկի ձևակերպման վայր Տրամադրման դրական գործոններ	Վարկի գումարի վաղաժամկետ մարման տույժ՝ չի սահմանվում Բանկի բոլոր մասնաճյուղեր 1) Դրական վարկային պատմություն, 2) Կայուն դրամական հոսքեր, 3) Բարի համբավ 4) Այլ գործոններ
24.	Մերժման գործոններ	1) Բացասական վարկային պատմություն, 2) Ֆինանսական ոչ բավարար վիճակ, 3) Կեղծ կամ անարժանահավատ տեղեկատվության տրամադրում, 4) Այնպիսի տեղեկատվության տրամադրում, որը կասկածի տակ է դնում վարկի վերադարձելիությունը 5) Այլ գործոններ
25.	Որոշման կայացման առավելագույն ժամկետ	5-10 րոպե
26.	Որոշման մասին հաճախորդին տեղեկացնելու ժամկետ	Վարկի տրամադրման մասին որոշումը կայացնելուց անմիջապես հետո
27.	Որոշման վավերականության ժամկետ	10 օրացուցային օր Բանկը իրավասու է հրաժարվել վարկը տրամադրելուց, եթե փոփոխվել են վարկի տրամադրման վերաբերյալ դրական որոշման կայացման համար էական համարվող պայմանները (օրինակ՝ կետանցված պարտավորություններ, բանկային հաշիվների կալանք/արգելանք և այլն)
28.	Որոշման վերահաստատման ժամկետ	Առանց վերահաստատման իրավունքի (որոշման վավերականությունը լրանալուց հետո անհրաժեշտ է ներկայացնել նոր հայտ)
29.	Վարկը տրամադրելու ժամկետ	Վարկի տրամադրման որոշումը կայացնելուց հետո առավելագույնը 10 օրացուցային օր
30.	Պահանջվող փաստաթղթեր	✓ Գործադիր մարմնի ղեկավարի/երաշխավորողի՝ 1) անձը հաստատող փաստաթուղթ 2) Հանրային ծառայությունների համարանիշ (կամ չունենալու մասին տեղեկանք), ✓ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից քաղվածք՝ գրանցման վերաբերյալ (պատճենահանված), ✓ Այլ փաստաթղթեր՝ ըստ անհրաժեշտության

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» օրենքով սահմանված՝ գերփոքր առևտրային կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին մինչև 5.000.000 դրամի չափով (ներառյալ՝ 5.000.000 Հայաստանի Հանրապետության դրամը) և (կամ) դրան համարժեք արտարժույթով տրամադրված վարկերի դեպքում հաճախորդը իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու վարկային պայմանագիրը՝ դրա կնքմանը հաջորդող 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում (մտածելու ժամանակ)՝ վերադարձնելով իր ստացած վարկի գումարն ամբողջությամբ և վճարելով տոկոսներ, որոնք հաշվարկվում են պայմանագրով նախատեսված տարեկան փաստացի տոկոսադրույքին համապատասխան: Վաղաժամկետ մարման դեպքում համամասնորեն նվազեցվում են վարկառուի վարկավորման ընդհանուր

ծախսի մեջ մտնող Բանկի եկամուտը ձևավորող վճարները: Հաճախորդն իրավունք ունի նաև վարկային պայմանագրով ունեցած պարտավորությունները ժամկետից շուտ կատարելու (մարելու)՝ անկախ այն հանգամանքից, թե նման իրավունք վարկային պայմանագրով նախատեսված է, թե ոչ:

2. Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Վարկի տոկոսագումարը հաշվարկվում է վարկի փաստացի մնացորդի նկատմամբ:
3. ***Տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը հաճախորդի համար տոկոսագումարները և այլ վճարները սահմանված ժամկետներում և չափերով կատարելու դեպքում:***
4. Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգը ներկայացված է հետևյալ հղմամբ՝ Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման ուղեցույց:
5. Վարկատուն իրավունք ունի միակողմանիորեն փոփոխելու վարկի էական պայմանները, այդ թվում՝ Վարկի տոկոսադրույքը՝ դրա մասին վարկառուին նախօրոք՝ 7 (յոթ) աշխատանքային օր առաջ ծանուցելով կամ պահանջել գործող պարտավորության վաղաժամկետ մասնակի կամ ամբողջական մարում, եթե՝
    1) վարկային պայմանագրի կնքման պահի համեմատ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված ԱՄՆ դոլարի փոխարժեքը ավելի քան 5 (հինգ) տոկոսով տատանման և/կամ սույն պայմանագրի կնքման պահի համեմատ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված լոմբարդային ռեպո տոկոսադրույք ավելի քան 3 (երեք) տոկոսով տատանման դեպքում,
    2) Բանկի կողմից հրապարակված լողացող տոկոսադրույքի հիմքում օգտագործվող հրապարակային բազային տոկոսադրույքի ավելի քան 2 (երկու) տոկոսային կետով տատանման դեպքում մեկ տարվա ընթացքում (լողացող տոկոսադրույքի դեպքում),
    3) վարկային պայմանագրի կնքման պահի համեմատ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված ՌԴ ռուբլու փոխարժեքի ավելի քան 10 (տասը) տոկոսով տատանման դեպքում,
    4) վարկային պայմանագրի կնքման պահի համեմատ միջազգային շուկայում նավթի (BRENT) և ոսկու հրապարակվող գների ավելի քան 20 (քսան) տոկոսով տատանման դեպքում,
    5) ՀՀ բացասական ՀՆԱ հրապարակման դեպքում,
    6) ՀՀ ԿԲ կողմից ՀՀ որևէ առևտրային բանկի լիցենզիայի հետ կանչման դեպքում,
    7) ՀՀ գործազրկության հրապարակվող ցուցանիշի ավելի քան 10 (տասը) տոկոսով աճի դեպքում,
    8) Արտերկրից ՀՀ կատարվող դրամական փոխանցումների հրապարակվող ցուցանիշի ավելի քան 10 (տասը) տոկոսով նվազման դեպքում,
    9) ՀՀ կամ հարևան երկրում/տարածքներում պատերազմի հայտարարման կամ պատերազմական գործողությունների դեպքում,
    10) ՀՀ կողմից արտակարգ դրության հայտարարման դեպքում,
    11) ՀՀ-ում արտահերթ խորհրդարանական ընտրությունների նշանակման դեպքում,
    12) վարկառուին կամ վերջինիս հիմնադրին սնանկ ճանաչելու դիմում (հարկադիր կամ կամավոր) ներկայացվելու դեպքում
    13) որևէ քրեական գործում վարկառուին կամ վերջինիս հիմնադրին որպես կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավվելու դեպքում կամ վերջիններիս նկատմամբ քրեական հետապնդում հայտարարված լինելու դեպքում,
    14) վարկառուի կամ վերջինիս հիմնադրի նկատմամբ 1 մլն ՀՀ դրամը գերազանցող գումարի բռնագանձման պահանջի բավարարման դեպքում,
    15) վարկառուի հիմնադրի ազատազրկման հետ կապված դատավճռի կայացման դեպքում դատական կարգով քրեական կամ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով մեղավոր ճանաչելու դեպքում, որի արդյունքում պահանջը կգերազանցի 1 մլն ՀՀ դրամը կամ առկա կլինի ազատազրկման որոշում,
    16) Փողերի լվացման տիպաբանություններով գործարքների իրականացման դեպքում կամ փողերի լվացման ցուցակներում հայտնվելու դեպքում.
    17) իրավաբանական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) գործունեության դադարեցում համաձայն պետ. ռեգիստրի,
    18) Իրավաբանական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) գործունեության դադարեցում /ժամանակավոր դադարեցում/՝ համաձայն ՊԵԿ-ի,
    19) վարկային պայմանագրի կնքման օրվանից հետո հաճախորդի վարկային բեռի 20% և ավելի ավելացման դեպքում, բացառությամբ Բանկի կողմից տրամադրված վարկերի,
    20) վերջին մեկ տարվա ընթացքում Բանկում ունեցած պարտավորությունների գծով 30 և ավելի ժամկետանց օր ունենալու դեպքում,
    21) այլ ֆինանսական կազմակերպությունում դասակարգվելու դեպքում,
    22) վարկառու կազմակերպության՝ նախորդ ժամանակաշրջանում շահութահարկով և/կամ աուդիտ հաշվետվությամբ արձանագրված վնասի դեպքում,
    23) վարկառու կազմակերպության սեփական կապիտալի նվազում նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատությամբ՝ համաձայն շահութահարկի և/կամ աուդիտ հաշվետվության,
    24) վարկառուի կողմից հարկային պարտավորությունների չկատարման և/կամ ժամանակին չկատարման փաստի դեպքում,

25) վարկային պայմանագրով սահմանված հաճախորդի պարտավորությունների չկատարման/թերացման՝ այդ թվում սահմանված կովենանտների խախտման դեպքում,
26) առանց Բանկի գրավոր համաձայնության վարկառուի կողմից նոր պարտավորությունների ձեռքբերման դեպքում, որոնց արդյունքում Վարկառուի կողմից ամսական վճարման ենթակա պարտավորությունները գերազանցում են վարկային պայմանագրի կնքման օրվա դրությամբ Վարկառուի ամսական մարումների 20 (քսան) տոկոսը,
27) շահութահարկի մասին հաշվետվության համաձայն նախորդ ժամանակաշրջանի մաքուր շահույթի համեմատ վարկառուի տարեկան մաքուր շահույթի նվազման դեպքում,
28) վարկառուի՝ վերջին 12 ամիսների միջին ամսական շրջանառությունը վարկային հայտը դիտարկելու պահին միջին ամսական շրջանառությունից պակաս լինելու դեպքում,
29) առանց Բանկի գրավոր համաձայնության վարկառուի կողմից՝ գործող պարտավորությունների 20%-ից ավելի չափով երաշխիքների և երաշխավորությունների տրամադրման դեպքում:

6. Բանկն իրավասու է վարկառուից պահանջել վաղաժամկետ հետ վերադարձնել Վարկը, հաշվեգրված տոկոսներն ու վարկային պայմանագրով Բանկին վճարման ենթակա այլ գումարները, ինչպես նաև միակողմանիորեն վերանայել վարկային պայմանագրի և Վարկի էական պայմանները (գումարի չափ, մարման ժամկետ, տարեկան տոկոսադրույք, Վարկի արժույթ և այլն) եթե առկա է սույն պայմանագրով տրամադրվող վարկի հրապարակային պայմաններով/տեղեկատվական ամփոփագրով սահմանված ներքոշարադրյալ ցանկացած հանգամանքներից որևէ մեկը՝
   1) Վարկառուի կողմից խախտվել են վարկային պայմանագրով նախատեսված պահանջները,
   2) բացահայտվել է վարկառուի կողմից ներկայացված իրավաբանական նշանակություն ունեցող և Վարկի տրամադրման և մոնիթորինգի իրականացման համար հիմք հանդիսացող փաստաթղթերի անարժանահավատություն, ինչպես նաև պարզվել է, որ Վարկառուի կողմից վարկային պայմանագրով տրված հավաստիացումներն ու երաշխիքները եղել են սխալ, անարժանահավատ կամ մոլորեցնող,
   3) առկա են վարկառուի անվճարունակությունը (սնանկության) փաստացիորեն հիմնավորող հանգամանքներ կամ փաստաթղթեր, ներառյալ՝ (սակայն չսահմանափակվելով)
      - «Սնանկության մասին» ՀՀ օրենքի համաձայն առկա են հաշվեկշռային անվճարունակության հիմքեր,
      - «Սնանկության մասին» ՀՀ օրենքի համաձայն առկա է փաստացի անվճարունակության իրավիճակ,
      - Վարկառուն «Սնանկության մասին» ՀՀ օրենքի համաձայն սնանկության վտանգի դիմում է ներկայացրել դատարան,
      - եթե Վարկառուն բանկ է կամ վարկային կազմակերպություն և առկա են «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով նախատեսված անվճարունակության հիմքերը:
   4) Բանկի, այլ բանկերի, վարկային կամ այլ կազմակերպությունների, կամ պետական բյուջեի կամ ցանկացած երրորդ անձանց նկատմամբ վարկառուն ունի ժամկետանց պարտավորություններ,
   5) վարկառուի բանկային հաշիվներին դրվել է արգելանք կամ կալանք,
   6) կորել են կամ վնասվել կամ այլ կերպ արժեզրկվել են վարկային պայմանագրով վարկառուի պարտավորության կատարման ապահովման միջոցները, վատթարացել են նրանց պահպանման պայմանները, կամ օրենքով սահմանված կարգով դադարել է դրանց նկատմամբ սեփականության իրավունքը, և դրանք Բանկի կողմից պահանջ ներկայացնելու պահից 10 (տասը) օրվա ընթացքում չեն վերականգնվել կամ փոխարինվել համարժեք ապահովման միջոցներով,
   7) խախտվել են վարկային պայմանագրի կատարման ապահովման պայմանագրով նախատեսված այլ պայմանները.
   8) որևէ պատճառով վարկային պայմանագրի կատարման ապահովման միջոց հանդիսացող երաշխավորության պայմանագրերը, երաշխիքները կամ ապահովագրական վկայագրերը (պոլիսները) ուժը կորցրել են, այդ թվում՝ անվավեր են ճանաչվել, կամ որոնք՝ ըստ Բանկի, այլևս չեն կարող համարվել որպես վարկային պայմանագրի կատարման ապահովման լիարժեք միջոց (երաշխավորի, երաշխիք տվողի կամ ապահովագրական ընկերության սնանկությունը, այլ պարտատերերի առջև վերջիններիս կողմից դրամական պարտավորությունները չկատարելը և այլն),
   9) ընդդեմ վարկառուի հարուցված են հայցեր, որոնց հայցագնի չափը կազմում է վարկառուի ընդհանուր ակտիվների հաշվեկշռային արժեքի 25%-ից ավելի (*Անհատ ձեռնարկատեր վարկառուի դեպքում՝ վարկի 25%-ից ավելի*),
   10) վարկառուն նվազեցրել է իր կանոնադրական կապիտալի չափը, դադարեցրել է իր գործունեությունը, կամ էապես փոփոխել է այն գործունեության բնույթը, որը նա իրականացնում էր վարկային պայմանագիրը ստորագրելու պահին (*անհատ ձեռնարկատեր վարկառուների դեպքում սույն կետը կիրառվում է այնքանով որքանով կիրառելի է անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ*),
   11) վարկառուի գործունեությունը խոչընդոտվել է իրեն պատկանող որևէ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի կորստի պատճառով,
   12) վարկառուին տրամադրված որևէ լիցենզիա, արտոնագիր կամ այլ թույլտվությունը (այսուհետ՝ Լիցենզիա) ուժը կորցրել է կամ որևէ կերպ սահմանափակվել է Լիցենզիայի հիման վրա իրականացվող գործունեությունը կամ վարկառուին

տրամադրված Լիցենզիան ենթարկվել է այնպիսի փոփոխությունների, որը հնարավորություն չի տալիս վարկառուին շարունակելու իր գործունեությունը նույն պայմաններով և ծավալներով,

13) Հայաստանի Հանրապետությունում ստեղծվել է լարված քաղաքական վիճակ, Հայաստանի Հանրապետությունը մտել է հայտարարված կամ չհայտարարված պատերազմի, լայնածավալ ռազմական գործողությունների մեջ, տեղի են ունեցել ապստամբություններ կամ այլ քաղաքական հուզումներ, բացառությամբ, եթե այդ դեպքերը էական ազդեցություն չունեն վարկառուի կողմից իր՝ վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման վրա,

14) վարկառուի կառավարման համապատասխան մարմնի կողմից վերակազմակերպման, լուծարման կամ անվճարունակության մասին որոշում է կայացվել կամ տեղի են ունեցել այնպիսի դեպքեր որոնք՝ ըստ գործող օրենսդրության, կարող են նման հետևանքներ առաջացնել,

15) վարկառուի մասնակիցների (բաժնետերերի, անդամների) կազմի, նրանց փայամասնակցության հարաբերակցությունում կատարված փոփոխությունների, երրորդ անձանց հետ կնքած որևէ պայմանագրերի կամ այլ հանգամանքների արդյունքում, Վարկառուի կառավարման մարմիններում որոշումներ կայացնելու իրավունքներ կստանան այլ անձինք, քան նրանք, որոնք որոշումներ կայացնելու իրավունքներ են ունեցել վարկային պայմանագիրը կնքելու պահին,

16) Բանկի մոտ առկա են արժանահավատ տեղեկություններ, որոնք վկայում են այնպիսի դեպքերի հնարավոր առաջացման մասին, որոնք կարող են էապես վատթարացնել վարկառուի ֆինանսական վիճակը կամ անհնար դարձնել վարկառուի կողմից իր՝ վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումը,

17) վարկառուն միջոցներ է ձեռնարկում Բանկի հետ կնքված ցանկացած պայմանագրի լուծման (վիճարկման) ուղղությամբ, այդ թվում՝ դատական կարգով,

18) վարկային պայմանագրի, ինչպես նաև դրանով սահմանված պարտավորությունների կատարման ապահովման նպատակով կնքված որևէ պայմանագրի հիման վրա վարկառուի վրա դրված որևէ պարտավորության կատարում անհնարին է դառնում դրա իրավաչափ չլինելու պատճառով,

19) վարկային պայմանագիրը կամ դրանով սահմանված պարտավորությունների կատարման ապահովման նպատակով կնքված որևէ պայմանագիր ճանաչվում է անվավեր կամ չկնքված,

20) վարկառուն դադարեցրել է իր ձեռնարկատիրական գործունեությունը,

21) վարկառուի աուդիտորները վարկառուի որևէ ֆինանսական հաշվետվության վերաբերյալ տվել են վերապահումով եզրակացություն,

22) չի կնքվել վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման ապահովման միջոց հանդիսացող գրավադրված գույքի ապահովագրության պայմանագիր կամ չի երկարաձգվել գրավադրված գույքի ապահովագրության պայմանագրի ժամկետը, կամ ապահովագրողի կողմից ապահովագրության պայմանագրով փոխվել է շահառուն (գրավադրված գույքի ապահովագրության պահանջի առկայության դեպքում),

23) վարկառուի կողմից խոչընդոտվել են վարկային պայմանագրով նախատեսված Վարկի նպատակային օգտագործումը ստուգելու Բանկի անվերապահ իրավունքները, ընդ որում՝ վարկային պայմանագրի իմաստով խոչընդոտում է համարվում վարկառուի կողմից Բանկին վերապահված իրավունքներից օգտվելու հնարավորության ցանկացած արգելք, խախտում, կետանց, տեղեկությունների չտրամադրում կամ ոչ արժանահավատ տեղեկությունների տրամադրում և այլն:

7. Տոկոսագումարների և վարկի գումարի մարումները ժամանակին չկատարելու դեպքում գրավադրված գույքը և/կամ դրամական միջոցները կարող են օրենքով սահմանված կարգով բռնագանձվել, իսկ հաճախորդի մասին տեղեկատվությունը Բանկը առավելագույնը երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է վարկային բյուրո, որտեղ ձևավորվում է հաճախորդի վարկային պատմությունը: Հաճախորդը իրավունք ունի վարկային բյուրոյից տարեկան մեկ անգամ անվճար ձեռք բերել իր վարկային պատմությունը:
8. Վատ վարկային պատմությունը կարող է խոչընդոտել հաճախորդին՝ ապագայում վարկ ստանալու համար:
9. Ժամկետանց պարտավորությունները կատարելու դեպքում մարումներն իրականացվում են հետևյալ հերթականությամբ՝ գումարի բռնագանձմանն ուղղված ծախսեր, այդ թվում դատական ծախսեր (առկայության դեպքում), տոկոսների տուժանք, վարկի մայր գումարի տուժանք, տոկոսներ, սպասարկման վճար և միջնորդավճարներ /առկայության դեպքում/ և վարկի գումար: Վարկատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ միակողմանիորեն փոփոխելու սույն կետում նշված մարումների հերթականությունը:
10. Կողմերի միջև ծագած վեճերը կարող են լուծվել դատական կարգով կամ ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով («ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով), հասցե՝ 0010 ք. Երևան, Մ. խորենացու փող. 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն 7-րդ հարկ, էլ. փոստ՝ info@fsm.am, հեռախոս՝ (+37460) 70-11-11, ֆաքս՝ (+37410) 58 24 21: Ընդ որում, եթե գույքային պահանջի չափը չի գերազանցում 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, ապա ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները չեն կարող վիճարկվել Բանկի կողմից:
11. Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է «ճանաչիր քո հաճախորդին» սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ տեղեկություններ:

12. Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (FATCA) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն Բանկը հաճախորդի ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է լրացուցիչ տեղեկություններ հավաքագրել:
13. Հաճախորդը իրավունք ունի Բանկի հետ հաղորդակցվել իր նախընտրած տարբերակով՝ էլ. փոստ կամ փոստային կապ: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումը ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիություն:
14. Վարկային պայմանագրի գործողության ընթացքում քաղվածքների, դրանց կրկնօրինակների, տեղեկանքների տրամադրման պայմաններին կարող եք տեղեկանալ հետևյալ հղումով՝ Սակագների տեղեկատվական ամփոփագիր:
15. Բանկի մասնաճյուղերի և բանկոմատների ցանկին, վերջիններիս գործունեության հասցեներին և աշխատանքային ժամերին կարող եք ծանոթանալ հետևյալ հղումով՝ Մասնաճյուղեր և բանկոմատներ:
16. Բանկի կողմից հեռահար սպասարկումն իրականացվում է IDBusiness համակարգի միջոցով, որի սպասարկման պայմաններին և սակագներին կարող եք ծանոթանալ հետևյալ հղումով՝ «Սակագների տեղեկատվական ամփոփագիր»